ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ՎՈԼՈԴՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ԺԲ.00.06- Միջազգային իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Գրիգոր Արմենի Չոբանյանի «Պետությունների տնտեսական ինքնշխանությունը միջազգային իրավունքի համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Գ. Չոբանյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է պետությունների տնտեսական ինքնիշխանության վերաբերյալ միջազգային իրավական հիմնահարցերի ուսումնասիրությանը: Թեմայի ընտրությունը հատկապես պայմանավորված է ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գլոբալացման գործընթացներով և ըստ էության, նոր միջազգային իրավակարգի ձևավորման միտումներով:

Նկատի ունենալով, որ պետությունների ինքնիշխանությունը և միջազգային իրավունքը պատմականորեն փոխկապակցված երևույթներ են, իսկ միջազգային իրավունքը ձևավորվել է հենց ինքնիշխան պետությունների հարաբերությունները կարգավորելու նպատակով, այսօր առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերել պետությունների տնտեսական ինքնիշխանության ավանդական պատկերացումների վրա գլոբալիզացիայի արդյունքում կատարվող փոփոխությունների ազդեցության ուսումնասիրությունը:

Վերջին տասնամյակներում, օտարերկրյա ներդրումների ոլորտում, ինչպես նաև միջազգային ֆինանսատնտեսական իրավահարաբերություններում տեղի ունեցող զարգացումները հանգեցրեցին պետությունների տնտեսական ինքնիշխանության վերաբերյալ ավանդական պատկերացումների վերանայմանը:

Պետք է ընդունել, որ ինքնիշխանության հայեցակարգն իր ծագումից ի վեր կրել է էական փոփոխություններ և յուրաքանչյուր անգամ վերաիմաստավորվել է պատմաքաղաքական որոշակի իրադարձությունների արդյունքում: Ասվածի հիման վրա կարելի է պնդել, որ ատենախոսական հետազոտության թեման հատկապես արդիական է նաև ժամանակակից գլոբալիզացիոն գործընթացների և համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող զարգացումների համատեքստում:

Գլոբալիզացիոն գործընթացների արդյունքում, չնայած էականորեն փոփոխվել է պետությունների տնտեսական կյանքի առաջնահերթությունները, այդուհանդերձ, տնտեսական ինքնիշխանության պահպանման հրամայականը շարունակում է գտնվել առաջին պլանում:

Վերոնշյալի լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով, որ միջազգային իրավունքի տեսությունում և միջպետական հարաբերությունների պրակտիկայում պետությունների տնտեսական ինքնիշխանությունը մնում է ոչ ամբողջովին ուսումնասիրված կատեգորիաներից մեկը, խրախուսելի է, որ ատենախոսության հեղինակն ուսումնասիրության ընթացքում, ի թիվս այլնի, առանձնացրել և քննարկել է տնտեսական ինքնիշխանության հիմնական բաղադրատարրերը: Մասնավորապես, համալիր վերլուծության է ենթարկել բնական ռեսուրսների նկատմամբ, օտարերկրյա ներդրումների, ինչպես նաև, մաքսային և հարկային ոլորտներում պետությունների ինքնիշխանության հետ կապված հիմնախնդիրները, այդ թվում պետությունների արժութային ինքնիշխանությանը վերաբերող հարցերը:

Հեղինակը համապարփակ վերլուծության է ենթարկել պետության ինքնիշխանության հասկացությունն ու էությունը ժամանակակից ինգետրացիոն գործընթացների լույսի ներքո: Մասնավորապես անդրադարձել է պետության ինքնիշխանության պատմական զարգացմանը, պատմական տարբեր ժամանակահատվածներում ինքնիշխանության հայեցակարգի փոփոխութ-

յունների ու զարգացումների վերաբերյալ հարցերին: Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել ինքնիշխանության և ինքնիշխան իրավազորություններ միջև էական տարբերությանը, և հղում կատարելով տարբեր դատական որոշումների, ինչպես նաև տեսական որոշ աղբյուրների վրա, վերահիմնավորել է, որ չնայած ինքնիշխան իրավազորությունները կարող են պատվիրակվել վերպետական ինստիտուցիոնալ կառույցներին, սակայն, ինքնիշխանությունն ինքնին չի կարող զիջվել ցնկացած այլ միջազգային իրավական սուբյեկտի:

Ատենախոսը, վերլուծելով պետությունների տնտեսական ինքնիշխանությունը գլոբալիզացիոն գործընթացների համատեքստում, արդարացիորեն հանգել է այն եզրակացությանը, որ այս գործընթացներն մի կողմից էապես ազդել են տնտեսական ինքնիշխանության ավանդական պատկերացումների վրա, սակայն մյուս կողմից, գլոբալիզացիոն գործընթացները միշտ չէ, որ հանգեցրել և հանգեցնում են միասնական տնտեսական, քաղաքական և իրավական նոր համակարգերի ձևավորմանը: Շարունակելով այս միտքը, հեղինակը պնդում է, որ այս գործընթացները հաճախ կարող են տանել բևեռացումների, ինչի արդյունքով կարող են ստեղծվել բազմաթիվ և բազմաշերտ իրավական, քաղաքական և տնտեսական համակարգեր, մինչդեռ, ցանկացած իրավիճակում պետությունների համար առվել կարևոր է տնտեսական ինքնիշխանության պահպանման գաղափարը:

Հեղինակը մանրամասն քննարկել է բնական ռեսուրսների նկատմամբ պետությունների մշտական ինքնիշխանությանը առնչվող հարցերը: Թեև որոշ հեղինակներ հարցականի տակ են դնում այս սկզբունքի իրավական պարտադիր բնույթը՝ ատենախոսության հեղինակը, հղում կատարելով ՄԱԿ-ի ԳԱ բանաձևերի իրավաբանական ուժին, ինչպես նաև միջազգային տարբեր դատական գործերով որոշումներին, հիմնավորել է այն փաստը, որ մշտական ինքնիշխանության սկզունքը միջազգային սովորութային իրա-

վունքի մաս է: Աշխատանքում անդրադարձ է կատարվել միջազգային իրավունքում բնական ռեսուրսների նկատմամբ պետությունների մշտական ինքնիշխանության սկզբունքի միասնական սահմանման բացակայության հիմնախնդրին և որպես իրավական բացի լուծում առաջարկվել է միջազգային-իրավական փաստաթղթերում ընդգրկել Կանոյի կողմից բնական ռեսուրսների համապարփակ սահմանումը:

Հեղինակը վերլուծության է ենթարկել օտարերկրյա ներդրումների ոլորտում պետության ինքնիշխան իրավազորությունների շրջանակները, մասնավորապես՝ անդրադարձ կատարելով այս ոլորտում պետությունների ինքնիշխան իրավազորությունների իրացման սահմանափակումներին, ինչպիսիք են օտարերկրյա ներդրողների միջազգային իրավական առավել արդյունավետ պաշտպանության կառուցակարգերը, երկկողմ ներդրումային պայմանագրերով (BIT) սահմանվող միջոցները, օտարերկրյա ներդրողների նկատմամբ արդար և անաչառ վերաբերմունքի չափորոշիչը (Fair Equitable Standard), օտարերկրյա սեփականության նկատմամբ արդար և անաչառ վերաբերմունքի սկզբունքը: Առանձին անդրադարձ է կատարվել պետությունների տնտեսական ինքնիշխանության ոլորտում ամենազգայուն թեմաներից մեկին՝ ազգայնացման և սեփականազրկման (nationalization and expropriation) իրավունքին:

Աշխատանքում ուսումնասիրվել է նաև պետությունների ֆիսկալ ինքնիշխանությունը հատկապես կապված թվային գործիքների միջոցով հարկերից խուսափելուն առնչվող խնդիրներին, ինչպես նաև արժութային ինքնիշխանության էությանն ու բովանդակությանը ժամանակակից տնտեսական հարաբերությունների լույսի ներքո: Ասենախոսը ներկայացրել է պետական ինքնիշխանության ոլորտում կրիպտոարժույթների մարտահրավերները՝ հատուկ ուշադրություն դարձվնելով փողերի լվացման և ահաբեկչության ֆի-

նանսավորման դեմ պայքարին վերաբերող, ինչպես նաև հարկերից խուսափելու դեմ ուղղված իրավակարգավորումներին:

Հեղինակի կողմից կատարվել են մի շարք տեսական բնույթի եզրահանգումներ, իսկ նրա կողմից ներկայացված գործնական առաջարկները արտացոլվել են համապատասխան օրենքներում փոփոխություն կատարելու հստակ ձևակերպումներով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ինը ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Հետազոտության տեսական հիմքը կազմել են տնտեսական ինքնիշխանության և առհասարակ պետությունների ինքնիշխանությանը նվիրված հայրենական և արտասահմանյան աղբյուրները:

Գրիգոր Չոբանյանի ատենախոսական հետազոտությունը հատկապես կարևորվում է նրանով, որ միջազգային իրավունքի ոլորտում առաջին անգամ մեկ աշխատության շրջանակում փորձ է արվում ուսումնասիրել պետությունների ֆինանսատնտեսական ինքնիշխանության բաղադրատարրերը, ինչպես նաև ներկայացնել այն պայմանները, որոնց առկայությունը սահմանափակում է տնտեսական ինքնիշխանության կոնկրետ տարրի ներքո պետությունների իրավազորությունների բացարձակ իրացումը:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են իմացության դիալեկտիկական, ձևական-իրավական, համեմատական-իրավական և այլ գիտական մեթոդներ, որոնց կիրառումը թույլ է տալիս ատենախոսի հետևությունները և առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նաև նրանում, որ ուսումնասիրության արդյունքները կարող են նպաստել պետությունների տնտեսական ինքնիշխանությանն առնչվող խնդիրների բացահայտմանը, դրանց վերաբերյալ լուծումներ գտնելուն, ինչպես նաև կիստա-

կեցնեն իրավական կարգավորման հարցադրումների շրջանակը և կբացահայտեն ու կկանխորոշեն դրանց զարգացման հետագա ուղիները:

Հեղինակն օգտվել է հայրենական և արտասահմանյան մեծաքանակ տեսական աղբյուրներից և միջազգային իրավական փաստաթղթերից, դատական նախադեպերից, ինչն, անշուշտ, հարստացրել է ատենախոսության տեսական հիմը և բովանդակությունը:

Հարկ է նշել, որ ատենախոսությունն աչքի է ընկնում շարադրանքի հստակությամբ, դրա բովանդակությունն արտացոլող դրույթների միջև գոյություն ունեցող տրամաբանական հաջորդականությամբ, ինչպես նաև Հեղինակի որոշ ինքնատիպ դատողություններով:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված գիտական հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրված ատենախոսությունը, ինչպես ցանկացած աշխատանք, զուրկ չէ վիճելի դրույթներից և առանձին թերություններից, դրանք են.

1. Սույն ատենախոսության թեման վերաբերում է պետությունների տնտեսական ինքնշխանության միջազգային իրավական ասպեկտներին, ուստի կարծում եմ, անհրաժեշտություն չկար ատենախոսության առաջին գլխի 1.1. ենթագլխումը, բավականին մանրամասը և ծավալուն շարադրել պետությունների ինքնիշխանության վերաբերյալ տեսական հարցերի պատմական էվոլյուցիան, այդ թվում լուսաբանել Ժան Բոդենի, Թոմաս Հոբսի և մյուսների աշխատությունները:

2. Պաշտպանության ներկայացվող դրույթներից 1-ին կետի ներքո արտացոլված դատողությունները մեր կարծիքով բավականաչափ հիմնավորված չեն: Հեղինակը նշում է, որ ինքնիշխան իրավազորության զիջումն իրավաչափ կարելի է համարել այն դեպքում, եթե դա չի հակասում պետության սահմանադրական իրավակարգին, և պետությունն ունի հնա-

բավորություն՝ վերականգնելու զիջած իրավազորությունները: Մինչդեռ աշխատանքը կշահեր, եթե հեղինակը մանրամասներ, թե ինչ է ենթադրում զիջած իրավազորությունները վերականգնելու հնարավորության ներքո:

3. Հեղինակի կողմից աշխատանքում ամփոփված եզրակացությունների 11-րդ կետում նշվում է բնական ռեսուրսների միասնական իրավական սահմանման անհրաժեշտության մասին՝ առաջարկելով սահմանել, որ բնական ռեսուրսների նկատմամբ մշտական ինքնիշխանությունը վերաբերում է պետության տարածքում ոչ մարդակերտ բոլոր ռեսուրսներին: Մինչդեռ, հեղինակը բավարար չափով չի հիմնավորում միասնական սահմանման անհրաժեշտությունը, ինչպես նաև ներկայացված չեն բավարար հիմքեր առ այն, թե միջազգային իրավական պրակտիկայում ինչպիսի խնդիրներ են առաջացել նման սահմանման բացակայության պայմաններում:

4. Ներկա ժամանակաշրջանում, պետությունների տնտեսական ինքնիշխանությունից բխող իրավունքների լիարժեք իրացման համար լուրջ խոչընդոտ են հանդիսանում ռազմաքաղաքական և տնտեսական առումով առավել հզոր պետությունների կողմից կիրառվող ոչ իրավաչափ տնտեսական սանկցիաները /խոսքը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին չի վերաբերվում/: Տնտեսական սանկցիաները, որպես արտաքին քաղաքականության գործիք օգտագործվում են բավականին ակտիվորեն: Ավելին, նշված սանկցիաները երբեմն կրում են առևտրային և տնտեսական պատերազմի բնույթ և հակասում են պետությունների համագործակցության ***jus cogens*** սկզբունքին: Այս առումով, կարծում եմ, ճիշտ կլիներ, եթե ատենախոսը թեկուզ ընդհանուր գծերով անդրադառնար նաև այս ցավոտ հիմնախնդրի լուսաբանմանը:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը և

պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ: Գրիգոր Չոբանյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժեքավոր: Այն աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Գրիգոր Արմենի Չոբանյանի «Պետությունների տնտեսական ինքնշխանությունը միջազգային իրավունքի համատեքստում» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսի կարծիքին ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.06- Միջազգային իրավունք մասնագիտությանը, բավարարում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

Իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Վ. Հ. Հովհաննիսյան

«10 » հուլիսի 2021թ.

Իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ.Հ. Հովհաննիսյանի
ստորագրությունը հաստատում եմ
Հայկ իրավ. գիտությունների թեկնածու,
դ.գ.դ., պրոֆեսոր Հ. Հ